

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սամվել Ալեքսանյանի, Ռուբեն Հայրապետյանի, Սուքիաս Ավետիսյանի և Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը լուրջ հիմնավորման կարիք ունեն, քանի որ չեն բխում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունից: Մասնավորապես, **2008** թվականի ապրիլի **30**-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի **4.3.5**-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակ ունի հետամուտ լինելու հարկման բազայի ընդլայնմանը և հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը՝ ար-

տոնությունների առավելագույն կրճատման, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառման միջոցով: Մինչդեռ ներկայացված նախագծերով սահմանվում են լրացուցիչ հարկային արտոնություններ:

Բացի դրանից, հիմնավորման կարիք ունի, թե ինչու են գործող օրենքներից հանվել կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները՝ դրանք փոխարինելով հասարակական միավորումներով, բարեգործական հիմնադրամներով և իրավաբանական անձանց միավորումներով:

2. «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գաղափարախոսությունը, քանի որ առևտրային արբիտրաժը նախատեսված է որպես առևտրային բնույթի հարաբերությունների հետ կապված վեճերը լուծող մարմին, իսկ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 263-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային վեճերը ենթակա են քննության՝ դատական կարգով: Աշխատանքային վեճերի լուծումը չի կարող դառնալ առևտրային արբիտրաժի քննության առարկա, քանի որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 263-րդ հոդվածը հստակ սահմանում է «աշխատանքային վեճ» հասկացությունը:

Իրավական տեխնիկայի առումով՝

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածը խմբագրման կարիք ունի, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրք» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ 239-Ն օրենքի «/այսուհետ՝ օրենք/» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները և այն հանգամանքը, որ նշված իրավական ակտն օրեսնգիրք է, այլ ոչ թե օրենք.

2) 1-ին հոդվածի 1-ին մասում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասին:

2. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «/այսուհետ` օրենք/» բառերը: Բացի դրանից, նույն հոդվածում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները:

3. «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի`

1) 1-ին հոդվածում «4-րդ մասի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «4-րդ կետի» բառերով` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, իսկ հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի:

2) 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «/այսուհետ` օրենք/» բառերը: Բացի դրանից, «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները:

Բացի դրանից, հայտնում ենք, որ 1-ին հոդվածով լրացվող բառերը խմբագրման կարիք ունեն, քանի որ բովանդակային առումով անհասկանալի են:

4. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «/այսուհետ` օրենք/» բառերը: Բացի դրանից, 1-ին մասում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները:

5. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը խմբագրման կարիք ունի, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի թիվ ՀՕ 124-Ն օրենքի «/այսուհետ` օրենք/» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի» բառերով` նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ

հողվածի 3-րդ մասի պահանջները և այն հանգամանքը, որ նշված իրավական ակտն օրենսդիրք է, այլ ոչ թե օրենք:

Բացի դրանից, «3-րդ կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «3-րդ մասով» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների հողվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, իսկ հողվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի:

6. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «/այսուհետ՝ օրենք/» բառերը.

2) 1-ին հոդվածի 1-ին մասում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները.

3) 1-ին հոդվածի 1-ին մասում «նախադասությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների հողվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, այլ ոչ թե նախադասությունների:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նույն հոդվածի 2-րդ մասին՝ «նախադասությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ
կատարելու մասին**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի» 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ 239-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 125-րդ հոդվածում՝

1. 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«1. Իրավաբանական անձինք իրենց գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահեր ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով կարող են ստեղծել իրավաբանական անձանց միություններ:»

2. 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«1. Իրավաբանական անձանց միությունը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել տնտեսական ընկերություն, կամ լինել նման ընկերության մասնակից»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին**

Հոդված 1. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ 183-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 13-րդ հոդվածի «ա)» կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«ա) հասարակական միավորումներին, բարեգործական հիմնադրամներին եւ իրավաբանական անձանց միություններին..»

Հողված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-617՝-12.05.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հողված 1. «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ 55-Ն օրենքի /այսուհետ` օրենք/ 2-րդ հոդվածի 4-րդ մասի վերջում լրացնել`

«օրենքով սահմանված դեպքերում մարզական գործունեության մասին պայմանագրով նախատեսված» բառերը:

Հողված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-617՝-12.05.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հողված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի թիվ ՀՕ 118-Ն օրենքի /այսուհետ` օրենք/ 15-րդ հոդվածում`

1. 22-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ`

«22) հասարակական միավորումների, բարեգործական հիմնադրամների եւ Իրավաբանական անձանց միությունների կողմից անհատույց սպառումը.»

2. 28-րդ կետում «հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական» բառերը փոխարինել «հասարակական միավորումների, բարեգործական հիմնադրամների, հրավաքանական անձանց միությունների» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

խազիծ
Պ-617⁴-12.05.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի թիվ ՀՕ 124-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 264-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով՝

«3. Օրենքով սահմանված դեպքերում կողմերը կարող են աշխատանքային պայմանագրում նախատեսել աշխատանքային վեճերի քննությունը արբիտրաժին հանձնելու վերաբերյալ դրույթներ:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախազիծ
Պ-617⁵-12.05.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի թիվ ՀՕ 196-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 18-րդ հոդվածում

1. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Մարզական գործունեության մասին պայմանագիրը կնքվում է մարզիկի եւ մարզական կազմակերպության միջեւ՝ աշխատանքային եւ (կամ) քաղաքացիական պայմանագրի տեսքով:»

2. հոդվածի վերջը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Մարզական գործունեության մասին պայմանագրում կարող են նախատեսվել վեճերի քննությունը արբիտրաժին հանձնելու վերաբերյալ դրույթներ»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՒ ՄՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ», «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵԿԱՄՍԱՀԱՐԿԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ**

Սույն օրինագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք առևտրային կազմակերպություններ որոնց գործունեության առարկան որոշակի մասով համապատասխանում է ոչ առևտրային կազմակերպությունների միություն ստեղծած կազմակերպությունների գործունեության առարկային եւ այդ համապատասխանության մասով կարիք ունեն իրենց գործունեությունը համակարգելու եւ ընդհանուր շահեր ներկայացնելու: Գործող օրենսդրությամբ առևտրային կազմակերպությունները չեն կարող մասնակցել ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծած միությանը, որը խոչնդոտում է ինչպես միության աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, այնպես էլ առևտրային կազմակերպությունների շահերի ներկայացմանը եւ արդյունավետ պաշտպանությանը: Մասնավորապես՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան իրավաբանական անձանց միություն է, որի մասնակիցները հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբներ են: Ոչ առևտրային կազմակերպությունների միության կարգավիճակ ունեցող այս միության նպատակը Հայաստանում ֆուտբոլի զարգացումն է, հանրապետության առաջնությունների կազմակերպումը, եվրոպայի, աշխարհի եւ միջազգային այլ առաջնություններում ու հանդիպումներում Հայաստանի ակումբների ու հավաքականների շահերը ներկայացնելը եւ պաշտպանելը: Հայաստանի ֆուտբոլի առաջնությանը մասնակցում են ոչ միայն հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբները, այլ նաև տնտեսական ընկերությունների կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբները, որոնց նպատակը ոչ միայն շահույթ ստանալան է, այլ նաև Հայաստանի առաջնությունում

մրցանակային տեղեր գրավելը, Հայաստանի հավաքականների համար որակյալ ֆուտբոլիստներ պատրաստելը, միջազգային ասպարեզում հայկական ֆուտբոլը ներկայացնելը, այսինքն նշված առումներով այս ակումբների գործունեության առարկան եւ նպատակները համաապատասխանում են միության գործունեության առարկային եւ նպատակներին, սակայն միությանը մասնակից չեն կարող լինել:

Այդպիսի խոչնդոտներ են առաջանում նաեւ բնապահպանական, իրավապաշտպան, խորհրդատվական, առողջապահական եւ այլ բնույթի իրավաբանական անձանց միություններ ստեղծելիս: Ակնհայտ է նաեւ, որ առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպությունների միությունները հանդիսանում են ոչ առեւտրային կազմակերպություն, ունեն բազմաթիվ նմանություններ, էականորեն իրենց գործունեության նպատակներով չեն տարբերվում միմյանցից եւ իմաստ չկա տարբերակում դնել այդ երկու միությունների միջեւ:

Հեղինակներ` Սամվել Ալեքսանյան, Ռուբեն Հայրապետյան, Սուքիաս Ավետիսյան, Վիկտոր Դալլաքյան